ՖԵՆՏԱՆԻԼԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱՇՐՋԱՆՈՒՄ

Լոս Անջելես վարչաշրջանում դեռահասների շրջանում գերդոզավորումից մահացությունը կրկնապատկվել է 2019-ից 2020 թվականներին (Covid-19 համավարակի ընթացքում), իսկ 2021 թվականին ֆենտանիլը ողջ երկրում՝ գերդոզավորումից դեռահասների մահվան դեպքերի մոտ 77%-ի պատճառ է հանդիսացել: Մենք հասել ենք Լոս Անջելես վարչաշրջանի պատմության մեջ գերդոզավորման վատթարագույն ճգնաժամին: Տեղանքում գրանցված վերջին ողբերգություններից է Լոս Անջելես վարչաշրջանի երեք երիտասարդների դեպքը, ովքեր 2022 թվականի մայիսին ստացել են ֆենտանիլով վարակված MDMA-ի գերդոզավորում: 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Bernstein ավագ դպրոցում սովորող 15-ամյա աշակերտին մահացած են գտել Հոլիվուդի համալսարանի շենքում ՝ ֆենտանիլ պարունակող հաբ կուլ տալուց հետո: Գերդոզավորման առնվազն 7 դեպք է գրանցվել Լոս Անջելես վարչաշրջանի այլ երիտասարդների մոտ:

Ֆենտանիլն այժմ հնարավոր է գտնել կեղծ հաբերի և այլ արգելված դեղերի մեջ՝ Լոս Անջելեսի վարչաշրջանում, իսկ ֆենտանիլի առկայությունը առաջացնում է գերդոզավորում և մահացություն: Գերդոզավորումից մահվան դեպքերն այլևս չեն տարածվում հիմնականում նրանց վրա, ովքեր պարբերաբար օգտագործում են դեղերը: Ֆենտանիլի պատճառով մենք ականատես ենք լինում, թե ինչպես են մարդիկ գերդոզավորվում և մահանում, երբ առաջին անգամ օգտագործում են արգելված նյութը կամ կեղծ հաբերը:

<u>Ի՞նչ է ֆենտանիլը:</u>

Ֆենտանիլն օփիոիդ է, որն ապօրինի վաճառվում է առձեռն, բայց կարող է նաև խառնվել արգելված նյութերի հետ: Երբ այն ընդունվում է օփիոիդների նկատմամբ անհանդուրժողականություն ունեցող անձի կողմից, ֆենտանիլը կարող է արագ հանգեցնել շնչառության դադարեցման և մահվան: Ֆենտանիլը 50 անգամ ուժեղ է հերոինից և 100 անգամ ուժեղ է մորֆինից: Թմրամիջոցների դեմ պայքարի վարչությունը հայտարարել է, որ իրենց կարծիքով առցանց վաճառվող կեղծ հաբերի 100%-ը պարունակում է ֆենտանիլ:

<u>Ի՞նչ է այն անում:</u>

Ֆենտանիլն աշխատում է ուղեղի օփիոիդային ընկալիչների վրա՝ նվազեցնելով ցավն ամբողջ մարմնում, սակայն այն նաև կարող է մարդկանց մոտ առաջացնել էյֆորիա, շփոթություն, հանգստություն, քնկոտություն, գլխապտույտ, փորկապություն և սրտխառնոց և կարող է նաև իջեցնել ձեր շնչառության մակարդակը:

ՖԵՆՏԱՆԻԼԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱՇՐՋԱՆՈՒՄ

Ինչո՞ւ է դա այդքան վտանգավոր:

Ֆենտանիլն ավելի ուժեղ է, քան մյուս օփիոիդները, նույնիսկ փոքր քանակությամբ: Ֆենտանիլի մի քանի հատիկը կարող է հանգեցնել գերդոզավորումից մահվան, և քանի որ այն չունի գույն և հոտ, այն դժվար է հայտնաբերել առանց փորձարկման:

Ինչո՞ւ է այն ավելացվում այլ հաբերին կամ դեղերին:

Ֆենտանիլն արտադրության մեջ շատ էժան է, և երբ այն խառնվում է այլ նյութերի հետ (օրինակ՝ MDMA, կոկաին, հերոին, մետամֆետամին) և ավելացվում է կեղծ հաբերին (արգելված օփիոիդային ցավազրկողներ, ինչպիսիք են՝ օքսիկոդոնը, մորֆինը, Նորկոն, Վիկոդինը), այն կարող է ուժեղացնել ազդեցությունն ու էյֆորիան:

Ինչպե՞ս իմանալ, որտեղ կա ֆենտանիլ:

Ոչ ոք չի կարող որոշել, թե արդյոք հաբը կամ դեղը պարունակում են ֆենտանիլ՝ նայելով դրան կամ հոտոտելով: Հնարավոր է օգտագործել առցանց գնված ֆենտանիլային թեստեր, բայց նրանք ցույց չեն տա, թե որքան ֆենտանիլ կա դրա մեջ կամ որքան ուժեղ է այն: Դրանք կարող եք ձեռք բերել մատչելի գնով առցանց՝ BTNX, Dose Test, Dance Safe, Wisebatch, կամ TACO:

Ինչպե՞ս կարող եք կանխել գերդոզավորումից մահը:

Նարկանը/նալոքսոնը կյանքեր փրկող դեղամիջոց է, որը հակադարձում է օփիոիդների գերդոզավորումը: Այն կարող է կիրառվել որպես ռնգային սփրեյ կամ միջմկանային ներարկման միջոցով, որը կվերականգնի նորմալ շնչառությունն այն մարդու մոտ, ով օփիոիդի չափից մեծ դեղաչափ է ընդունել և դադարել է շնչել: Լոս Անջելես վարչաշրջանի բնակիչները կարող են իրենց բուժող բժշկից խնդրել նալոքսոնի դեղատոմս: Բացի այդ, որոշ դեղատներ կարող են տրամադրել նալոքսոն, և մասնակից դեղատների ցանկը հասանելի է առցանց այստեղ: Ի վերջո, Լոս Անջելես վարչաշրջանի բնակիչները կարող են այցելել http://www.LAodprevention.org հասցեով՝ առցանց ռեսուրսների ցուցակը ստանալու համար: Նյութերի օգտագործման կանխարգելման և բուժման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ www.RecoverLA.org: